Փաստաբանի մահվան պատճառ է հանդիսացել գլխուղեղի ֆունկցիայի խանգարումը

21.11.2012 11:42

2012թ. նոյեմբերի 18-ին՝ ժամը 22:45-ին, Լոռու մարզի Շահումյան համայնքում գործող «Մուշ» ռեստորանային համալիրում հայտնաբերվել է ՀՀ փաստաբանների պալատի անդամ Ս. Շարբաթյանի դին՝ բռնության հետքերով: Հաշվի առնելով հանրության հետաքրքրությունը՝ տեղեկացնում ենք, որ ըստ դատաբժիշկների եզրակացության՝ Ս. Շարբաթյանի մահվան պատճառ է հանդիսացել գլխուղեղի ֆունկցիայի խանգարումը:

Նկատի ունենալով, որ զանգվածային լրատվամիջոցներով տարածվել են իրարամերժ ու որոշ դեպքերում՝ ոչ հավաստի տեղեկություններ եւ միաժամանակ կարևորելով հանրության՝ ստուգված տեղեկություններ ստանալու իրավունքը՝ ներկայացնում ենք որոշ տեղեկություններ դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների մասին այն ծավալով, որքանով դրանց հրապարակումը չի խոչընդոտի նախաքննության հետագա ընթացքին:

Մասնավորապես՝ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, որի նախաքննության տվյալներով, դատաբժշկական փորձաքննությամբ եւ ձեռնարկված օպերատիվ միջոցառումներով պարզվել է, որ 2012թ. նոյեմբերի 18-ին երեկոյան Ս. Շարբաթյանը «Մուշ» ռեստորան է հրավիրել Վանաձոր քաղաքի բնակիչ Արտակ Վերանյանին եւ իր քրոջ որդի Հ. Ասլիկյանին՝ նպատակ ունենալով Արտակ Վերանյանից պահանջելու, որպեսզի վերջինս չհետապնդի իր քրոջ դստերը:

Համաձայն պայմանավորվածության՝ նշված ժամին ռեստորան են գնացել Հ. Ասլիկյանը եւ Արտակ Վերանյանը՝ վերջինիս եղբայր Արեն Վերանյանի եւ ընկերոջ՝ Ս. Դիլոյանի հետ: Ժամը 22:00-ի սահմաններում վերոնշյալ հարցի շուրջ վիճաբանություն է սկսվել, որը վեր է ածվել ծեծկռտուքի՝ արդեն ռեստորանի բակում: Արդյունքում՝ Ս. Շարբաթյանը դեմքին եւ քթի շրջանում մեկ հարված է ստացել, ինչն էլ, փորձաքննության համաձայն, հանգեցրել է գլխուղեղի ֆունկցիաների խանգարման: Վնասվածքն ստանալուց հետո Ս. Շարբաթյանը տեղափոխվել է ռեստորանի առանձնասենյակ, որտեղ եւ գիտակցության չգալով՝ մահացել է:

Բացի այդ, փորձաքննության համաձայն՝ Ս. Շարբաթյանի մարմնի տարբեր հատվածներում հայտնաբերվել են օդամղիչ ատրճանակից արձակված գնդակներից առաջացած թվով 5 կապտուկների տեսքով չթափանցող վնասվածքներ, որոնք մահվան պատճառի հետ կապված չեն:

Նշենք, որ մամուլում հրապարակված այն տեղեկությունները, թե Ս. Շարբաթյանի նկատմամբ բռնությունը կապված է նրա մասնագիտական գործունեության հետ եւ որ նրա մահվան պատճառը սուր կտրող-ծակող գործիքի կամ հրազենի գործադրումն է, իրականությանը չեն համապատասխանում: Նախաքննությամբ նման տվյալներ ձեռք չեն բերվել:

2012թ. նոյեմբերի 19-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության Գուգարքի բաժին կամովին ներկայացել է Արտակ Վերանյանը, ներկայացրել օդամղիչ ատրճանակ եւ հայտնել, թե Ս. Շարբաթյանի հետ վիճաբանել է ինքը եւ ինքն է բռունցքով հարվածել նրա դեմքին:

Կատարվում են քննչական գործողություններ՝ դեպքի հանգամանքները լիարժեք պարզաբանելու, Արտակ Վերանյանի ցուցմունքը ստուգելու ուղղությամբ, պարզելու, թե ում է պատկանում օդամղիչ ատրճանակը եւ ով է այն օգտագործել վիճաբանության ժամանակ, ինչպես նաեւ ձեռնարկվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ Արեն Վերանյանին եւ Ս. Դիլոյանին հայտնաբերելու եւ ոստիկանություն բերման ենթարկելու ուղղությամբ:

ՀՀ դատախազություն

Աղբյուրը՝ http://www.aravot.am

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })